https://doi.org/10.53587/25792865-2022.7-69

ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԱՆՁԻ ԵՎ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մամյան Տ.Ս.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Անչափահասների գործերով և մասնակցությամբ դատական փորձաքննությունների գերակշռող առկայությունը ՀՀ իրավական համակարգում խոսում է հասարակությունում հանցավոր և դեվիանտ վարքագծի դրսևորման առկա վիճակի մասին, հետևաբար և՝ դրա ուսումնասիրությունն առանձին կարևորություն ունի դատական փորձագիտական պրակտիկայում:

Կատարված բազմաթիվ դատահոգեբանական փորձաքննությունների վերլուծության արդյունքում ի հայտ են եկել անչափահասի անձի և նրա գործունեության այն հանգամանքները, որոնք կապված են անչափահասի փորձի պակասի, նրա վարքային հակազդումների հետ, ինչի հետևանքով թերանում է անչափահասի ինքնաքննադատությունը, ինչպես նաև՝ ներշնչվողականության, կրկնօրինակման, հակադրվելու և նեգատիվիզմի հատկությունների առավել արտահայտիչ դառնալը կարող են հանգեցնել դեվիանտ վարքի: Այս ամենի պայմաններում կարևորվում է վարքի շարժառիթների ու պատճառների հետազոտումը: Վերջիններիս, ինչպես նաև անչափահասի տարիքային և սեռային առանձնահատկությունների, զգայական, իմացական, հուզական, կամային ոլորտների զարգացման առանձնահատկությունների, սոցիալական կարգավիճակի և խոցելիության ուսումնասիրումը թույլ կտա կատարել որակական առումով առավել ամբողջական հոգեբանական փորձարարական հետազոտություններ:

Թվարկված առանձնահատկությունների ամբողջական հետազոտությունը թույլ է տալիս դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում անչափահասի վարքային դրսևորումները և հոգեբանական առանձնահատկությունները հետազոտելիս ցուցաբերել համակարգային մոտեցում:

***Բանալի բառեր**. դատահոգեբանական փորձաքննություն, հոգեբանական առանձնահատկություն, անչափահաս, դեռահասության շրջան, մեղսունակություն, դեվիանտ վարք, դելիկվենտ վարք, անչափահասի վարքային հակազդումներ, շեշտված բնավորություն, համակարգային մոտեցում:*

Երեխան դեռահասության շրջան է մտնում և դրանից դուրս գալիս՝ արդեն չափահաս դարձած: Այդ անցումային ժամանակաշրջանը մարդու ձևավորման դժվարին և ճգնաժամային փուլերից է, որի ընթացքում տեղի է ունենում անչափահասի անձի ձևավորումը՝ հոգեֆիզիոլոգիական էական փոփոխություններով հանդերձ: Վերջիններս նշանակալի ազդեցություն կարող են ունենալ անչափահասի վարքի վրա: Անչափահասի հոգեկանի առանձնահատկությունները նրան դարձնում են խոցելի. կարող են ի հայտ գալ վարքի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական դրսևորումներ: Տարիքային այս փուլում երևան են գալիս

Թղթակցական հասցեն՝ Մամյան Տաթևիկ Սուրենի, հոգեբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ք. Երևան, Իսակովի 24, e-mail: tatevik.mamyan.psy@gmail.com

խնդիրներ, որոնք կապված են անչափահասի փորձի պակասի հետ, ինչի հետևանքով թերանում է անչափահասի մոտ իր իսկ հանդեպ ինքնաքննադատությունը: Ներշնչվողականության, կրկնօրինակման, հակադրվելու և նեգատիվիզմի հատկություններն է՛լ ավելի նշմարելի են դառնում, ինչն էլ կարող է բերել դեվիանտ վարքի:

Մեղադրյալ անչափահասների անօրինական գործողությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվելու ունակության խնդիրը, փաստորեն, վերածնեց դատահոգեբանական փորձաքննությունը (ԴՀՓ)՝ տասնամյակների մերժումից և մոռացությունից հետո: Գ.Մ. Մինկովսկին իրավաբաններից առաջինն էր, ով բարձրացրել է որոշակի դատական գործերի քննության ժամանակ հատուկ հոգեբանական գիտելիքների կիրառման անհրաժեշտության հարցը: Նա ընդգծել է, որ ԴՀՓ-ն պետք է պատասխանի այն հարցին, թե արդյոք տվյալ սուբյեկտն ունի՞ շեղումներ իր տարիքին բնորոշ ինտելեկտուալ զարգացման մակարդակից: Եվ եթե այդպիսիք կան, ապա եզրակացնել, որ դրանք ունեն ազդեցություն դեռահասի մեղսունակության վրա: Այսպիսով, Գ.Մ. Մինկովսկու կողմից մատնանշվել է փորձագիտական հոգեբանական հետազոտությունների միջոցով հոգեպես առողջ դեռահասների մեղսունակությունը որոշելու սկզբունքային հնարավորությունը [1] :

Հոգեբանական փորձաքննություն իրականացնելիս, հաշվի է առնվում անչափահասի վարքի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված դրսևորումները, ինչպես նաև որոշվում է հոգեկանի զարգացման մակարդակի և վարքում դրսևորված գործողությունների համապատասխանելիությունը և դրանք կառավարելու ունակությունը: Յուրաքանչյուր տարիքային խումբ բնութագրվում է հատուկ տարիքային ճգնաժամերին համապատախան հոգեբանական առանձնահատկություններով:

Անդրադառնալով դեռահասության շրջանին վերաբերող մեկնաբանումներին՝ հարկ է նշել, որ Ի.Ա. Արշավսկին գտնում էր, որ այդ շրջանում օրգանիզմի զգայունակությունը ձեռք է բերում ընտրողական բնույթ. այն որոշ ազդեցությունների նկատմամբ ավելի ընկալունակ է, քան մյուսների [2, էջ 151]: Վան-Կրևելենը և Ա.Ե. Լիչկոն եզրահանգել են, որ օրգանիզմի զգայունակության փոփոխություններից բացի, դեռահասության շրջանը կարող է նպաստել առկա, բայց լատենտ խանգարումների վաղ դրսևորմանը: Եվ երբեմն կարող է այս անցումային շրջանը հանդես գալ հիվանդագին ձևերով [3]: Գ.Խ. Ուշակովը հակառակ կարծիքի էր, ըստ որի դեռահասությունը կարող է հարթել առկա ոչ մեծ խանգարումները՝ գիշերամիզություն, գործառութային տիկեր: Այսինքն, այս փուլը Ուշակովը ներկայացնում է որպես առողջարար ներգործության փուլ [2]:

Դեռահասի դեսոցիալ և դելիկվենտ վարքի պարզաբանման համար Մինկովսկին առաջարկում էր տարբերակել դելիկվենտության 3 տեսակ.

1. Կրիմինոգեն տիպ. բնութագրվում է դեռահասի սովորական կյանքի ոճով, որը պայմանավորված է նրանց աշխարհայացքով, համոզմունքներով, արժեքային համակարգով: Նա է հենց դառնում ասոցիալ և հանցավոր իրավիճակի ստեղծողը:
2. Իրավիճակային-քրեածին տիպ. բնութագրվում է հանցավոր արարքի անբարենպաստ վիճակի առկայությամբ: Այստեղ աշխատում են ներշնչվողականության մեխանիզմները: Անչափահասը չգիտակցելով արարքի հանցավոր բնույթը՝ տրվում է խմբի, հեղինակային կերպարի կամ ալկոհոլի ազդեցությանը:

3. Իրավիճակային տիպ. բնութագրվում է ասոցիալ վարքի աննշան ձևերով, երբ հանցավոր իրավիճակը պայմանավորված է լինում զուտ առկա հանգամանքներով՝ անչափահասի մեղքի բացակայության պայմաններում [4]:

Ա.Ե. Լիչկոն նկարագրել է անչափահասի վարքի դրսևորումները՝ հակազդումները, ռեակցիաները, որոնք բնութագրում և բացատրում են անչափահասի վարքի յուրահատուկ ստերեոտիպային տեսակը [5]: Այստեղ հարկ է քննարկենք այն հակազդումները, որոնք տարբերակում են անչափահասի վարքը:

Անձի ձևավորման տարիքային այս փուլում անչափահասը փորձում է ազատվել մանկությունից և անցում կատարել մեծահասակի դաշտ, ազատվել ծնողի խնամակալությունից կամ որևէ այլ հեղինակային մեծահասակի հովանավորումից, ինչը կարող է անչափահասի վարքում դրսևորվել ազատագրման հակազդմամբ: Սակայն այս ազատագրման հակազդումը վերաբերում է ոչ միայն անձանց, այլ նաև կարգ ու կանոնին: Անչափահասը հակազդում է հասարակության ընդունված նորմերին: Ընդհանրական բնութագրով այս հակազդումը կոչվում է «ազատագրման հակազդում»: Այն ծառայում է անչափահասի ինքնահաստատմանն ու ինքնուրույնությանը, այսինքն՝ անկախության ձգտմանը:

Անչափահասի վարքն ուղղորդող գործոն է համարվում՝ այդ տարիքում հրապուրանքը, որն, ըստ էության, գտնվում է նրա հետաքրքրությունների ու դրդապատճառների միջակայքում: Հրապուրանքի ազդեցությամբ փոխվում է անչափահասի վարքի դրսևորումները, օրինակ՝նա կարող է ուսման, հանգստի կամ ընտանքի հետ շփման փոխարեն իր ողջ ժամանակը նվիրել իր հրապուրանքն առաջացնող գործոնին: Նա կարող է մեծ հրապուրանք ցուցաբերել նկարչությանը, երաժշտությանը, ռադիոտեխնիկային, և պրոցեսը նրա համար ավելի կարևոր է դառնում, քան հենց այդ գործունեության արդյունքը: Ինտելեկտուալ հրապուրաքին զուգահեռ կարող է ակտիվանալ նաև հրապուրանքը մարմնի, ուժի, դիմացկունության և ճկունության նկատմամբ: Այդ պատճառով անչափահասը կարող է շատ մեծ ոգևորությամբ զբաղվել սպորտով: Կարող է լիդեր լինելու հրապուրանք առաջանալ, երբ դեռահասը փորձում է ղեկավարել իր հասակակիցներին, կամ այն խմբին, որին անդամակցում է ինքը: Իր անձի նկատմամբ հրապուրանքը կարող է դրսևորվել նաև այլ կերպ, երբ անչափահասը փորձում է եսակենտրոն հրապուրանքի հակազդմամբ իր նկատմամբ շրջապատի ուշադրությունը կենտրոնացնել: Այսպես, կարող է արտառոց վարք դրսևորել, հագուստ կրելով յուրահատուկ կամ առանձնահատուկ որևէ գիտելիքի կամ օտար լեզվի իմացությամբ ու կիրառմամբ, որպեսզի առանձնանա մյուսներից, իսկ ռիսկի զգացում ունենալու պատճառով՝ անչափահասի մոտ կարող է դրսևորվել մոլության հրապուրաքը, երբ նա սկսում է տարվել տարբեր թղթախաղերով և վիճակախաղերով:

Այս տարիքային փուլում անչափահասը խոցելի է լինում, քանի որ ակտիվ է լինում նրա մոտ նմանակելու հակազդումը, և այն կարող է և՛ դրական, և՛ բացասական կերպարի նմանակման հանգեցնել: Անչափահասը կարող է ընդօրինակել հասակակիցների շրջանում հարգանք կամ հեղինակություն վայելող ընկերոջը, որևէ նորաձև կուռքի, կամ բացասական հերոսի: Հաճախ անչափահասի նկատմամբ հասարակությունը, հատկապես՝մեծահասակները շատ մեծ պահանջներ են առաջադրում, ինչը վեր է լինում անչափահասի հնարավորություններից (ներքին ռեսուրսներից). նրա մոտ կարող է առաջանալ դիմադրելու,

ընդդիմության հակազդում: Այն կարող է նաև դրսևորվել ուշադրության պակասի պատճառով, երբ անչափահասը զգում է դրա կտրուկ նվազումը և շատ ուժեղ պահանջը: Ընդդիմության հակազդման դրսևորման արդյունքում դեռահասը կարող է բացակայել դասերից, փախչել տնից, գողության փորձեր անել, իր կյանքի նկատմամբ աուտոդիստրուկտիվ վարք դրսևորել: Ծայրահեղական վարքն անչափահասի մոտ խոսում է նրա հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ փնտրելու մասին, ինչպես նաև նրա «քոփփինգ» մեխանիզմների մասին, որոնք ակնառու երևում են վարքում:

Սա այն ճգնաժամային ու բարդ ընթացքն է, որն անցնում է անչափահասը դեպի սոցիալականացում: Այդ ընթացքը միանշանակ չէ. կարող է լի լինել թերություններով ու շեղված, ինչպես նաև դեվիանտ վարքի դրսևորումներով: Այսպիսով, վարքը հետազոտելիս կարևոր պայման է ուսումնասիրել այն ստերեոտիպային հակազդումները, որոնք երևան են հանում վարքի տարատեսակ դրսևորումներ:

Հարկ է նշել նաև, որ անչափահասի վարքի դրսևորումներում երևան են գալիս նաև նրա բնավորության շեշտվածությունները, որոնք անբարենպաստ պայմաններում ուղղորդում են նրա վարքը: Ասոցիալ վարքի հիմքում ուսումնասիրվում են նաև բնավորության առանձին գծերը, որոնք աչքի են ընկնում չափազանց ընգծված դրսևորմամբ: Ա.Ե. Լիչկոն գտնում է, որ «շեշտված բնավորություն» ունեցող անչափահասի մոտ դիտվում է բարձր պատրաստակամություն՝ անբարենպաստ պայմանների նկատմամբ դրսևորելու ոչ նորմալ ասոցիալ վարք [6]:

Բնավորության շեշտվածության այդ տեսակները անչափահասների մոտ կարելի է դիտարկել հետևյալ կերպ:

Բնավորության **հիպերտիմային տիպի** դրսևորմամբ անչափահասը մանուկ ժամանակ աչքի է ընկնում աղմկարարությամբ, անդադար շարժուն վարքով, իր հասակակիցների շրջանում լիդերությամբ, անկարգ ու ռիսկային վարքով: Նրանց հատուկ է ճկուն միտքն ու արագ ըմբռնելու կարողությունը, առանձնանում է լավ ընդունակություններով, բարձր տրամադրությամբ ու ֆիզիկական ուժով: Սակայն այս ամենին, նա իր անկանոն ու անկարգ վարքի շնորհիվ չի կարողանում դրանք դրսևորել: Անչափահասն այս տեսակ բնավորության շեշտվածությամբ, կարող է երբեմն տրամադրության բռնկումներով ու զայրույթով արձագանքել մեծահասակի կողմից արվող ճնշումներին: Հիպերտիմ անչափահասի համար դժվար է լինում երկար կենտրոնանալ և տևական նույնատիպ աշխատանք կատարել, անհանդուրժող է միապաղաղ պայմաններին և վարքի որոշակի կանոնների հետևողական պահպանմանը: Հասակակիցների հետ կոնֆլիկտների հիմնական պատճառ է հանդիսանում նրա լիդեր լինելու ցանկությունը: Թերի դաստիարակության և հսկողության պատճառով հիպերտիմ տեսակի անչաահասը կարող է վատ շրջապատ ընկնել, կախվածություններ ձեռք բերել խմիչքներից և թմրանյութերից:

Բնավորության **լաբիլային տիպ** դրսևորող անչափահասների բնութագրական հատկանիշ է տրամադրության անկայունությունը, որը շատ հաճախ ու շատ կտրուկ ձևով է փոխվում, ինչը և ազդում է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ անչափահասի վերաբերմունքի վրա: Նրանք աչքի են ընկնում շատ խորը ապրումներով և հիմնականում մտերմիկ հարաբերություններ են ստեղծում այն մարդկանց հետ, ովքեր նկատում և օգնում են իրենց բարդ իրավիճակներում, իսկ հուզական մտերմություն են զգում նրանց հետ, ովքեր

պաշտպանում են նրանց: Մտերիմ մարդկանց կորուստը կարող են շատ ծանր տանել, իսկ հասակակիցների խմբում լիցքերային հակումներ չեն դրսևորում: Գործունեության և հարաբերությունների մեջ ձգտում են նոր տպավորությունների: Աաբիայեն տիպի անչափահասին դժվար է տրվում մտերիմ մարդկանց մերժում ընդունելը և նրանցից բաժանվելը: Անբարեխղճության պայմաններում տևականությունը, ոչ բարյացակամ վերաբերմունքը կարող են դրդել այս տեսակի անչափահասին հուզական կապեր ստեղծել առոցիալ խմբի հետ շփումներում:

Ինտրովերտ՝ շիզոիդ տեսակի անչափահասի մոտ դրսևորվում են վարքում պարփակվածությունը, հասակակիցների հետ շփումներին դժվարությունները, մտքերի մեջ խորասուզվելը: Դժվարանում են հասկանալ այլոց ապրումներն ու զգացմունքները, քանի որ կենտրոնացած են իրենց իսկ ապրումների ու մտքերի վրա: Այս տիպի անչափահասների մոտ թույլ է զարգացած էվպաթիան, և այդ պատճառով նրանք կարող են անսիրտ ու անտարբեր թվալ: Կենցաղում դժվարանում և ընդդիմանում են կարգ ու կանոնին, սակայն չեն հանդուրժում իրենց իսկ հետաքրքրությունների դաշտում այլոց ճնշումներն ու ներգաղութը:

Շիզոիդ տեսակի անչափահասի համար դժվար են այն շփումները, որոնք պահանջում են կարեկցանք, անկեղծություն, ուշադրություն և վերաբերմունք իրենց հանդեպ: Դեվիանտ վարք ցուցադրելու պատճառ կարող են լինել սպիտրային խմիչքներն ու թմրանյութերը, որոնք այս տիպի շերշվածությամբ անչափահասներն օգտագործում են հասակակիցների հետ շփումները հեշտացնելու համար: Դիմելականում շիզոիդ տեսակի անչափահասների դեվիանտ վարքի ձևերն են գրագանատությունը, գողությունը, որտեղ նրանք կարող են գործել մենակ:

Հաջորդ տիպը, որն աչքի է ընկնում դրտագգրգռությամբ ընդգծված դրսևորմամբ, **էպիլեպտոիդ տիպն է**: Դեռ մանկուց այս տիպի բնավորություն կրողների աչքի են ընկնում տրտմությամբ և վատ տրամադրությամբ, դժգոհությամբ, տևական ժամանակ առանց հանգստանալու կարող են լաց լինել նաև աչքի են ընկնում զվարճանալ չկարողանալով: Փոքրուց նրանց մոտ կարող են երևան գալ սադիստական հակումներ: Անչափահասը կարող է աֆեկտիվ բուռն բռնկումներ ունենալ ամենաչնչին առիթներով, օրինակ՝ զայրույթից հարվածել ու ջարդել ծեղքի տակ հայտնվածը: Հասակակիցների խմբում ձգտում են ղեկավարել, իշխել, բայց և կարող են չընդունվել նույն այդ խմբի կողմից, քանի որ հաճախ են սահմանները խախտում, կորցնում չափի զգացումը հարաբերություններում: Դեվիանտ վարքի դրսևորումներից են այս տիպի մոտ խաղամոլությունը, ագրեսիվ վարքի դրսևորումներն էլ կարող են հանգեցնել օրինախախտ ու քրեական վարքի:

Ասահման եսակենտրոնությամբ աչքի ընկնող տեսակ է **հիստերոիդ տիպը**: Նրանց անհագ ծարավն իրենց անձի նկատմամբ ուշադրության, հիացմունքի և երկրպագության` եսակենտրոնության տիպին դրսևորում է: Ուշադրությունն գրավելու անհագ ցանկությունը կարող է հանգեցնել նաև դեվիանտ վարքի. հասարակության կողմից ուշադրության արժանանալու համար կարող են դիմել ասոցիալ վարքի, կարող են չափը խախտելով ալկոհոլ և թմրանյութ օգտագործել, պարծենալով դրանով և դրա պատճառած հաճույքի չափով: Իրենց կնատմամբ ուշադրության նվազման պատճառով դիմում են հարբեցողության, հեռանում են դարողից, գողությունների կատարող, ասոցիալ խմբերի անդամ դառնում, միայն ուշադրություն վերագնահատելու միջոց գտնելու համար:

Անկայուն տիպը մանկուց աչքի է ընկնում տարրական վարքի կանոնների յուրացման դժվարությամբ, անհնազանդությամբ, աչքի են ընկնում՝ չսովորելով, դասերից փախուստներով, անմիտ թափառումներով և հակում են դրսևորում դեպի զվարճանքները, սկսում են շատ վաղ ծխել և խմել, հարել անչափահասների փողոցային խմբերին, մանր գողություններով են սկսում զբաղվել, թմրանյութեր օգտագործել։ Խմբավորումների մասնակից դառնալու ցանկության հետ մեկտեղ սակայն իրենց երկչոտության պատճառով չեն ձգտում լիդերության, այլ դառնում են գործիք այլոց ձեռքերում։ Անգործունյա, սովորել չցանկանալու, ալկոհոլ չարաշահելու նրանց հակումները բերում են ասոցիալ ու անօրինական վարքի, ինչպես նաև հակասոցիալ խմբերին հարելու։

Մյուս տիպի յուրահատկությունն է մշտական համաձայնություն ցուցաբերելը շրջապատի թելադրանքին։ Այստեղ նշմարվում է **կոնֆորմային տիպի** վարքը։ Այս դեռահասները փորձում են չտարբերվել շրջապատից՝ լինել ու մտածել, վարվել ու ապրել «ինչպես բոլորը» սկզբունքով։ Այդ է պատճառը, որ կախված նրանից, թե ինչպիսի շրջապատում կհայտնվեն, կրկնում են տվյալ շրջապատին հատուկ դրական կամ բացասական բնութագրերը։ Կոնֆորմային տիպին բնավորություն ու դրանով պայմանավորված կոմֆորմային վարք դրսևորող անչափահասը աչքի չի ընկնում ինքնուրույնությամբ, նախաձեռնողականությամբ, չեն փորձում առանձնանալ իրենց դրսևորումներով, ոչ ուսման, ոչ այլ տեսակ գործունեության մեջ։ Այդ իսկ պատճառով ձուլվում են խմբում և իրենց չեն փորձում դրսևորել որպես լիդեր։ Կոնֆորմային անչափահասը չի կարողանում հակադրվել բացասական ազդեցությանը, ապա հեշտությամբ կարող է հայտնվել փողոցային ասոցիալ խմբերում, կամ հայտնվել որևէ մեկի վատ ազդեցության տակ, չմերժել ալկոհոլ և թմրանյութ օգտագործելը [7]։

Այսպիսով, անչափահասի տարիքային այս փուլի բարդությունների ու առանձնահատկությունների ճանաչողությունը, բնավորության շեշտվածության պայմաններում դեվիանտ վարքի առանձնահատկությունների ուսումնասիրումը հնարավոր է դարձնում ավելի խորը և պարզորոշ տեսնել այն խնդիրները, որոնց բախվում է անչափահասը, կանխատեսել այն վարքը, որը դեվիանտ և ասոցիալ դրսևորումների հավանական ելքեր է ունենում և համակարգային մոտեցում ցուցաբերել ԴՀՓ-ի շրջանակում կատարվող հետազոտությունների նկատմամբ։

Անչափահասների մասնակցությամբ փորձաքննությունների հետազոտման օբյեկտ են հանդիսանում նրանց հոգեկան գործընթացները, անհատական տիպաբանական առանձնահատկությունները, տարիքային առանձնահատկությունները, հուզակամային ոլորտը, հուզական վիճակը, սոցիալ, ինտելեկտուալ կարողությունները գործի համար կարևոր նշանակություն ունեցող կամ ենթադրվող իրավախախտ գործողության պահին։

Անչափահասների ԴՀՓ-ի հիմնական խնդիրն է՝ անչափահասի ինտելեկտուալ զարգացման մակարդակի սահմանային մտավոր հետամնացության կամ օլիգոֆրենիայի պարզումը, որի դեպքում հետազոտվում է անչափահասի հուզակամային ոլորտը, նրա մոտ հոգեբանական ինֆանտիլության մեխանիզմների առկայությունը, ուսումնասիրվում են նրա անհատական տիպաբանական առանձնահատկությունները, գործի համար կարևոր բնութագրական հատկանիշները, ինչպիսիք կարող են լինել, օրինակ՝ երևակայությունը, հնարելու հակումը, դիմացինին դուր գալու, սոցիալական հավանության արժանանալու հակումը, բարձր ներշնչվողականությունը, նորմերի և անթույլատրելի արարքների

իմացության, այդ իմացությունը առօրյա կյանքում կիրառելու կարողությունը և թե ինչպես են դրանք դրսևորվում անչափահասի մոտ վտանգավոր և հանցավոր իրավիճակներում։ Հետազոտվում են նաև հանդիպող սենսորային խանգարումներ, օրինակ՝ լսողության կամ տեսողության խանգարումը, խոսքի խանգարումը, և իրականացվում նման սենսորային խանգարումներ ունեցող անձանց դատահոգեբանական փորձաքննություն։ Հարկ է նշել, որ թվարկված խնդիրների համար անհրաժեշտ են տարբեր մասնագիտական բնագավառներից դատաբժիշկ հոգեբան փորձագետներ, մանկավարժ-հոգեբաններ, համապատասխան ոլորտի դեֆեկտոլոգ փորձագետներ, ինչպես նաև հոգեբանահոգեբուժական փորձագետներ։ Այսպիսով, կարող ենք հանգել այն եզրակացության, որ անչափահասների մասնակցությամբ ԴՀՓ-ի ժամանակ նպատակահարմար և ցանկալի է իրականացնել համալիր դատական փորձաքննություններ՝ հաշվի առնելով անչափահասի հոգեկան գործունեության առանձնահատկությունները։

Փորձաքննությունների ժամանակ առանձնացվում են հետազոտման ենթակա անչափահասների հոգեկան կոգնիտիվ, հուզական և կամային գործընթացները։ Կոգնիտիվ ոլորտի գործընթացներն են՝ զգայունությունը, ընկալումը, երևակայությունը, մտածողությունը և ինտելեկտը։ Հուզական ոլորտին են պատկանում հույզերը, զգացմունքները, հուզական վիճակները (աֆեկտ, հուզական լարվածություն, ֆրուստրացիա)։ Կամային ոլորտի հետազոտվող գործընթացներն են՝ ակտը, գործողությունը, գործունեությունը, վարքը։ Երբեմն հոգեկան գործընթացների այս ոլորտներն այնքան սերտորեն են փոխկապակցված, որ դրանք ուսումնասիրվում և գնահատվում են միասին և միաժամանակ։ Իրավական տեսանկյունից դիտարկելիս՝ գնահատվում է անձի իր հուզական խիստ դրսևորումները զսպելու ունակությունը, վարքը ուղղորդելու և հարմարեցնելու սոցիալապես ընդունելի վարքի նորմերին։

Անչափահասների հոգեբանական փորձաքննության մեջ կարևորագույն խնդիր է հոգեբանական տարիքի ախտորոշումը։ Հարկ է նշել, որ փորձաքննություն նախաձեռնողի կողմից սովորաբար հարց է առաջադրվում որոշակի հոգեբանական տարիքի՝ 14, 16, 18 հասնելու վերաբերյալ։ Կլինիկական և հոգեբանա-մանկավարժական տարիք հասկացությունը բնութագրվում է՝ ելնելով քանակական և որակական չափորոշիչներից։ Եթե տարանջատենք տարիքային բաժանումներն ըստ իրավական չափանիշների, ապա մինչև 14 տարեկանը բնորոշվում է որպես կրտսեր դեռահասության տարիք, 14-16 տարեկանը՝ միջին դեռահասության տարիք, 16-18-ը՝ ավագ դեռահասության տարիք և 18-20-ը՝ պատանեկություն, որը զբաղեցնում է միջանկյալ տեղ դեռահասության և հասունության միջև։

Անձի հասունության աստիճանը գնահատելու համար օգտակար է վերլուծել նրա էմպաթիայի ունակությունը, երբ մարդը կարողանում է իրեն պատկերացնել այլ մարդու դերում և հասկանում է նրա զգացմունքներն ու ապրումները։ Կարևոր է վերլուծել նաև նրա մեղքի զգացումի ձևավորվածության աստիճանը, ապագայի նկատմամբ վերաբերմունքը, այսինքն տեսնել իր վարքի պատճառահետևանքային կապերը, իր գործողությունների արդյունքները կանխատեսելու կարողությունը և այլն։ Հարկավոր է տարբերակել անձի իրավագիտակից լինելու հասկացությունը նրա կողմից բարոյաէթիկական նորմերի իմացությունից։ Իրավագիտակցությունն օրենքների իմացություն է և վարքագծի իրավական նորմերի ձևավորում, երբ անձի բարոյաէթիկական հասունությունն արտացոլվում է նրա

գործողություններում, որոնք կատարելիս անձը հաշվի է նստում օրենքի գերակայության հետ: Դրանք նրա համոզմունքային համակարգում են, որտեղ կա ձևավորված դիրքորոշում զանցանքների, խախտումների, հանցանքերի նկատմամբ: Իրավագիտակցության հիմքում ընկած են բարոյաէթիկական նորմերի գիտակցումը, անձի դիրքորոշումներում դրանց զարգացման աստիճանն ու ինտեգրացիան:

Անչափահասների ԴՀՓ-ի իրականացման ընթացքում գործի հոգեբանական տարրերը պարզաբանելու, իրավական քննվող իրավիճակին ճիշտ լուծում տալու և եզրահանգման համար հոգեբան փորձագետին հիմնականում առաջադրվում են հարցեր, որոնք վերաբերում են զարգացման հապաղմանը, ինչը պայմանավորված չէ հոգեկան հիվանդությամբ և այդ հապաղման դրսևորումներով: Հարցադրում է արվում նաև անչափահասի վարքի իր կողմից գիտակցման աստիճանի վերաբերյալ՝ իր հոգեկան զարգացման մակարդակը հաշվի առնելով: Պարզվում է, թե արդյոք նա կարո՞ղ էր կառավարել իր գործողությունները, հասկանալ դրանց փաստացի բնույթը, հասկանալ իր հանցավոր վարքի հասարակական վտանգավորության աստիճանը կամ իր գործողությունները կառավարելու կարողությունը:

Կարծում եմ, որ անչափահասների մասնակցությամբ դատական գործերը հոգեբանական քննության առնելիս փորձագետ հոգեբանը նպատակահարմար է, որ առաջնորդվի նաև անչափահասի կողմից դելիկվենտ վարք դրսևորելու նպատակների և դրանց անձնային նշանակությունը պարզելու հետազոտմամբ, ասել է թե՝ կիրառի համակարգային մոտեցում: Կարևոր է տվյալ տարիքի ճգնաժամով պայմանավորված նրա անձնային որակների դրսևորումների և վարքում դեռահասի համար նշանակալի նպատակների վերլուծությունը: Վերլուծության առարկա են նաև անչափահասի պահանջմունքները: Անչափահասի հոգեբանական «ես»-ի ձևավորման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ինքնահաստատման պահանջմունքը, որը մի կողմից դրդում է նրան տարբեր կոնֆլիկտային իրավիճակների մեջ հայտնվելուն, մյուս կողմից՝ իր հասակակիցների, ընդ որում՝ հաճախ հակասոցիալական վարք ունեցողների շրջանում հայտնվելուն, որն էլ իր հերթին կարող է նպաստել տարաբնույթ բացասական երևույթների առաջացմանը: Ուստի, անչափահասի ներգրավվելը տարաբնույթ սոցիալական խմբերի մեջ, կրթական և տարաբնույթ գործունեությամբ զբաղվածությունը, հմտությունների ու գիտելիքների զարգացմանն ուղղված գործունեությունը, լայն սոցիալական կապերը տարբեր խմբերի ու անհատների հետ, հանդես են գալիս որպես անչափահասների իրավախախտումների կանխարգելման գործոններ:

Ինչպես և մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում անչափահասների հետ տարվող բոլոր քրեական գործերի ժամանակ, անկախ անչափահասի դերակատարությունից՝ նա կլինի մեղադրյալի, թե տուժողի դերում, անհրաժեշտ է հատուկ մասնագետի՝ հոգեբանի կամ սոցմանկավարժի ներկայությունը, ով հաշվի կառնի անչափահասի կենսաբանական, հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունները, կօգնի արդյունավետ կազմակերպել ինչպես մինչդատական, այնպես էլ դատական գործընթացը՝ առանց վնասելու դեռ լիարժեք չձևավորված անչափահասի հոգեկանը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ անչափահասի ընդունակությունը գիտակցելու իր գործողությունների բնույթը և դրանց կառավարելը, կախված է ոչ միայն ինտելեկտուալ գործառույթների զարգացման մակարդակից, այլ նաև էականորեն պայմանավորվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝

- հուզակամային ոլորտի առանձնահատկությունները,
- մոտիվացիոն ոլորտը,
- արժեքային համակարգի կողմնորոշումը,
- շարժառիթային պետեր ու նպատակներ, որոնցով նա առաջնորդվում է:

Վերը թվարկված գործոնները, կարծում եմ, պետք է լինեն հոգեբան փորձագետի հետազոտության բաղադրիչ, որոնց վերլուծությունը և փորձարարական հետազոտության արդյունքները թույլ կտան համակարգային մոտեցում ցուցաբերել անչափահասի մասնակցությամբ յուրաքանչյուր ԴՀՓ-ի շրջանակում:

Գրականության ցանկ

1. Проблемы ранней профилактики правонарушений несовершеннолетних. Г.М.Миньковский //Всесоюзный Инс-т по изучучению Причин и разработке мер предупреждения преступности, М. 1978.
2. Ս.Դաւոյթյանեան, «Մարդու հոգեներսնական զարգացման հիմունքները», Երևան, 2004:
3. Сафуанов Ф.С. Судебно-Психологическая Экспертиза в уголовном процессе, М., 1998
4. Արուլումյան Ռ., Ա. Գասպարյան, Վ. Մելքոնյան «Իրավաբանական հոգեբանություն», Երևան 2003:
5. Подростковая психиатрия, Личко А.Е., Изд. 2-е, дополненное и переработанное..—Л.: Медицина, 1985.—416 с.
6. Ալանեսյան Ֆ.Մ., Պապյան Վ.Ռ., Ասյուսյան Ս. Ս., Հովսեփյան Գ.Ռ. «Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում: //Մեթոդական ձեռնարկ., Երևան: «Լուռոյության և կրթության հայկական կենտրոն» ՀՎ, 2009, 151 էջ
7. Գրիվ Է., «Հոգեբանությունը իրավական գործունեությունում» Եր., Ձանգակ-97, 2007:

СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ЭКСПЕРТИЗА НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ. ОСОБЕННОСТИ ПОВЕДЕНИЯ

Мамян Т.С.

В статье рассматриваются психологические особенности и поведенческие проявления несовершеннолетних, привлекаемых к судебно-психологическим экспертизам. Отмечено, что судебные дела по делам несовершеннолетних уникальны, досудебные дела включают в себя ряд общих принципов и подходов. Особое внимание обращено на то, что в ходе судебного разбирательства необходимо учитывать возрастно-половые особенности несовершеннолетнего, особенности развития эмоциональной, познавательной, эмоционально-волевой сфер, социальный статус-уязвимости, социальную культуру, сложившиеся системы ценностей в обществе, в котором формируется несовершеннолетний.

В статье рассматриваются мотивы девиантного поведения несовершеннолетних, их значение в данном возрасте. Подчеркнуто, что анализ некоторых особенностей выполнения СПЭ несовершеннолетних позволяет системно подойти к поведению несовершеннолетнего, обследуемого по СПЭ, при изучении психологических особенностей.

Ключевые слова: *судебно-психологическая экспертиза, психологическая особенность, несовершеннолетний, подростковый возраст, вменяемость, девиантное поведение, делинквентное поведение, подростковые поведенческие реакции, относительный характер, системный подход.*

FORENSIC PSYCHOLOGICAL EXPERTISE OF MINORS. FEATURES OF BEHAVIOR

Mamyan T.

The article deals with the psychological characteristics and behavioral manifestations of minors involved in forensic psychological expertises (FPE). It is noted that court cases involving minors are unique, pre-trial cases include a number of general principles and approaches. Particular attention is paid to the fact that in the course of the trial it is necessary to take into account the age and gender characteristics of the minor, the features of the development of emotional, cognitive, emotional-volitional spheres, social status vulnerability, social culture, established value systems in the society, the minor is formed in.

The article discusses the motives of deviant behavior of minors, their significance at a given age. It is emphasized that the analysis of some features of the implementation of the FPE of minors allows a systematic approach to the behavior of a minor, examined according to the FPE, when examining psychological characteristics.

Keywords*: forensic psychological expertise, psychological feature, minor, adolescence, criminal sanity, deviant behavior, delinquent behavior, adolescent behavioral reactions, relative nature, systematic approach.*

Ներկայացվել է խմբագրության 10.02.2022
Ընդունվել է տպագրության 19.06.2022